

«Վավերացնում են»

Հայաստանի Հանրապետության

Նախագահ Ռ Քոչարյան

24 փետրվարի 2007 թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 փետրվարի 2007 թվականի N 174-Ն

**309 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 1795-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1795-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

որոշմամբ հաստատված մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի՝

ա) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8 «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին»<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան լվացող միջոցներն արտադրման և իրացման փուլերում պետք է ունենան Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության դրական եզրակացություն.»

բ) IV-րդ բաժնի «Լվացող միջոցների անվտանգությունը բնութագրող պահանջները» ենթաբաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Լվացող միջոցներին ներկայացվող հիգիենիկ պահանջները**

9 Լվացող միջոցները պետք է անվնաս լինեն ինչպես արտադրության, այնպես էլ պահման, փոխադրման և օգտագործման ժամանակ մարդու կյանքի և առողջության համար, չառաջացնեն տեղային մաշկագրգռիչ ազդեցություններ, ինչպես նաև չպետք է ունենան թունավոր, մաշկաճարձակող, ալերգիկ, մուտագեն, քաղցկեղածին ազդեցություններ օրգանիզմի վրա:

10 Լվացող միջոցները չպետք է ունենան օրգանիզմում կուտակվելու (կումուլյատիվ) հատկություններ:

11 Լվացող միջոցները պետք է հեշտ և արագ մաքրվեն (հեռացվեն) մարդու մաշկածածկույթից և լվացվող-մաքրվող արտադրատեսակների վրայից.

12. Լվացող միջոցները պետք է լավ լուծվեն ջրում և չունենան սուր հոտ

13 Լվացող միջոցները չպետք է ունենան մակակլանվելու հատկություն մաշկը և լվացման-մաքրման ենթակա իրերը դրանցով մշակելու ժամանակ

**Լվացող միջոցներին ներկայացվող անվտանգության պահանջները**

14 Լվացող միջոցների արտադրման համար օգտագործվող մակերևութաակտիվ նյութ-

թրի առաջնային կենսատարրալուծման աստիճանը պետք է լինի 80 տոկոսից ոչ պակաս  
15 Լվացող միջոցների արտադրման համար օգտագործվող մակերևութաակտիվ  
նյութերի լրիվ կենսատարրալուծման աստիճանը 28 օրվա ընթացքում պետք է հասնի  
առնվազն 60 տոկոսի (ըստ ածխածնի երկօքսիդի)

16 Լվացող միջոցներում կան դրանց մեկ տոկոսանոց ջրային լուծույթում ջրածնի  
իոնների խտությունը (pH) պետք է լինի

3-ից պակաս ձեռքերի մաշկի հետ չշփվող թթվային լվացող միջոցների համար

3-ից մինչև 11.5 ձեռքերի մաշկի հետ չշփվող լվացող միջոցների համար

11.5-ից ավելի ձեռքերի մաշկի հետ չշփվող հիմնային լվացող միջոցների համար

16ա Լվացող միջոցներում ֆոսֆոր պարունակող միացությունների զանգվածային  
մասը (վերահաշվարկված ըստ P<sub>2</sub>O<sub>5</sub>) պետք է լինի

17 տոկոսից ոչ ավելի ֆոսֆատներ պարունակող լվացող միջոցներում (բացառու-  
թյամբ ջուրը փափկացնող լվացող միջոցների)

30 տոկոսից ոչ ավելի ջուրը փափկացնող լվացող միջոցներում

16բ Քլորակտիվ միացություններ պարունակող լվացող միջոցներում ակտիվ քլորի  
զանգվածային մասը պետք է լինի 8 տոկոսից կամ 200 գ/լմ<sup>3</sup> ից ոչ ավելի

16գ Փոշենման լվացող միջոցներում փոշու զանգվածային մասը չպետք է լինի  
3 տոկոսից ավելի »

գ) 17-րդ կետում

«ա» ենթակետը «անվանումը» բառից հետո լրացնել « պիտանիության ժամկետը,  
պահման պայմանները (անհրաժեշտության դեպքում) զտաքաշը,» բառերով,

«գ» ենթակետում «2» թիվը փոխարինել «0.2» թվով

վերջին պարբերությունից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբե-  
րություններ

«Պոտենցիալ ալերգենները նշվում են լվացող միջոցներում դրանց 0.01 տոկոսից  
ավելի պարունակության դեպքում

Ջրածնի իոնների ակտիվությունը նշվում է 3-ից ցածր կամ 11.5-ից բարձր pH-ի  
արժեքի դեպքում «Ձեռքերի մաշկի հետ չշփման ենթակա չէ» մակագրությամբ կամ այդ  
պահանջը բնութագրող նշանի մակնշմամբ

«Պարունակում է ակտիվ քլոր» մակագրությունը քլոր պարունակող սպիտակեց-  
նող բաղադրիչներով լվացող միջոցների համար »

դ) VIII բաժնի ստանդարտների ցանկը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր  
տողերով

«ՊՕՍՍ 22567 7	Սինթետիկ լվացող միջոցներ ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասի որոշման մեթոդ
ՊՕՍՍ 25644 (հավելված Բ փորձադեման մեթոդ)	Սինթետիկ լվացող փոշենման միջոցներ ՇՆդիանուր տեխնիկական պահանջներ
ՊՕՍՍ Ռ 50551	Կենցաղային քիմիայի ապրանքներ Ակտիվ քլորի որոշման մեթոդ
ՊՕՍՍ Ռ 51023	Կենցաղային քիմիայի ապրանքներ ֆոսֆոր պարունակող միացությունների որոշման մեթոդներ

2 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից 6  
ամիս հետո

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Ա. Մարգարյան

2007 թ փետրվարի 20  
Երևան